Հայաստանի Հանրապետության
Գիտությունների Ազգային Ակադեմիա
Մոլեկուլային կենսաբանության
Ինստիտուտ ՊՈԱԿ

Национальная Академия
Наук Республики Армения
Институт Молекулярной
Биологии ГНКО

№ 2465-268
30.12.2025թ.

Մաղոյան ՍՊԸ-ի
Տնօրեն՝ Ներսես Մաղոյանին

Հարգելի՛ պրն Մաղոյան,

«ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կնսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի և Մաղոյան ՍՊԸ-ի միջև 2025 թվականի դեկտեմբերի 16-ին կնքվել է «ՄԿԻ-ՄԱԾՁԲ25/48-104» ծածկագրով պայմանագիր: Համաձայն պայմանագրի՝ պարտավորվել եք հավելված 1-ով սահմանված ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ-ին համապատասխան ծառայություն մատուցել: Սակայն Ձեր կազմակերպության կողմից 29.12.2025թ-ի տրված գրության համաձայն, Դուք հրաժարվում եք պայմանագրով նախատեսված ծառայության մատուցումից՝ ժամկետի սղության հիմքով և համաձայն եք, որ կիրառվեն ՀՀ Գնումների մասին օրենքով նախատեսված պատժամիջոցները:

Ուստի տեղեկացնում ենք Ձեզ, որ պայմանագիրը միակողմանի լուծվում է համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Համաձայն ՀՀ Կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N526-Ն որոշման 33-րդ կետի 16-րդ ենթակետի՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է

ՀՀ,0014 Երևան, Հասրաթյան, 7 «» Հեռ. 37410281626 «» Ֆաքս 37410282061 «» էլ.փոստ imb@sci.am
РА,0014 Ереван, Асратяна, 7 «» Тел. 37410281626 «» Факс 37410282061 «» Эл.почта imb@sci.am
www.molbiol.sci.am

Հայաստանի Հանրապետության
Գիտությունների Ազգային Ակադեմիա
Մոլեկուլային կենսաբանության
Ինստիտուտ ՊՈԱԿ

Национальная Академия
Наук Республики Армения
Институт Молекулярной
Биологии ГНКО

պայմանագիրը միակողմանի լուծելու մասին մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է Գնումների գործընթացի մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված, կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, եթե սույն ծանուցումը ստանալուց հետ 5 աշխ. օրյա ժամկետում Ձեր կողմից վճարվի պայմանագրի կատարման ապահովումը՝ 12000 ՀՀ դրամ և որակավորման ապահովումը՝ 18000 ՀՀ դրամ ընկերության ՀՀ ՖՆ Գործառնական վարչության 900018005273 հաշվեհամարին, ապա Մադոյան ՍՊԸ -ն չի ներառվի Գնումների գործընթաին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Տնօրեն Ա. Առաքելյան

Կատարող՝գնումների համակարգող Ն. Հայրապետյան

Հեռ.՝ (+374 10) 28-26-22

Էլ-փոստ՝gnumner@mb.sci.am